

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԳԿՎ-2018-ՄԱ-1

Handwritten signatures in blue ink.

Հայաստանի Հանրապետություն
քաղաք Երևան

ապրիլի երկու հազար տասնութ թվական



Սույն պայմանագիրը կնքված է:

«Ընդունելությունների տուն» փակ բաժնետիրական ընկերությունը (հասցե՝ ք. Երևան, Մեսրոպ Մաշտոցի պողոտա 47 /քառասունյոթ/ պետական գրանցման համարը՝ 273.120.02817, գրանցման ամսաթիվը 02.08.2000թ./երկուսը օգոստոսի երկու հազար/, վկայական՝ 02 Ա 048364), ի դեմս գլխավոր տնօրեն Թամարա Ալբերտի Իկնոյանի (ANO200413, տրված՝ 21.07.2012թ. /քսանմեկը հուլիսի երկու հազար տասներկու/, 011-ի կողմից, հասցե՝ ք. Երևան, Մոսկովյան 372. /երեսունյոթ/, 9 բն. /ինը/), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մի կողմից և

Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 4/չորս/), այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս վարչության աշխատակազմի ղեկավար՝ Վահագն Ֆելիքսի Հարությունյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա, և որի անունից համաձայն 04.04.2018թ.(չորսը ապրիլի երկու հազար տասնութ) տրված լիազորագրի հանդես է գալիս լիազորված անձ՝ Անահիտ Վլադիմիրի Եղիազարյանը (ծնված 04.07.1992թ. /չորսը հուլիսի հազար ինը հարյուր ինսուներկու/, անձնագիր՝ AH0635153, տրված՝ 25.07.2008թ./քսանհինգը հուլիսի երկու հազար ութ/, 016-ի կողմից, հասցե՝ ք. Գյումրի, Արագած 2 /երկու/ թաղ., շ. 5 /հինգ/, բն. 7 /յոթ/, մյուս կողմից, միջև.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Սույն պայմանագիրը կնքված է հիմք ընդունելով.
 - Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը,
 - Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 /երկու հազար տասնութ/ թվականի մարտի 6-ի /վեց/ N 239-Ն /երկու հարյուր երեսունինը/ որոշումը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Սույն պայմանագրի գնման առարկա է հանդիսանում «Ընդունելությունների տուն» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Մեսրոպ Մաշտոցի պողոտա 47 /քառասունյոթ/ հասցեում գտնվող 5727.2 /հինգ հազար յոթ հարյուր քսանյոթ ամբողջ երկու տասնորդական/ քառ. մետր մակերեսով շենք-շինությունները, այդ թվում՝ հիմնական մասնաշենք 4313.8 /չորս հազար երեք հարյուր տասներեք ամբողջ ութ տասնորդական/ քառ. մետր մակերեսով, 3 /երեք/ քրթեջներ 960.8 /ինը հարյուր վաթսուն ամբողջ ութ տասնորդական/ քառ մետր, օդամղիչ կայան 372.1 /երեք հարյուր յոթանասուներկու ամբողջ մեկ տասնորդական/ քառ. մետր, կաթսայատուն 47.1 /քառասունյոթ ամբողջ մեկ տասնորդական/ քառ. մետր, 2 /երկու/ օժանդակ շինություններ 12.8 /տասներկու ամբողջ ութ տասնորդական/ քառ. մետր (6 /վեց/ քառ. մետր և 6.8 /վեց ամբողջ ութ տասնորդական/ քառ.



մետր), պահակատուն 20.6 /քսան ամբողջ վեց տասնորդական/ քառ. մետր և դրանց օգտագործման և սպասարկման համար հատկացված 1.379152 /մեկ ամբողջ երեք հարյուր յոթանասունինը հազար հարյուր հիսուներկու միլիոներորդական/ հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ Անշարժ գույք):

2.2 Անշարժ գույքը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի կողմից 25.04.2008թ.-ին /քսանհինգը ապրիլի երկու հազար ութ/ տրված N 2288457 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի հիման վրա սեփականության իրավունքով պատկանում է Վաճառողին:

2.3 Սույն պայմանագիրը կնքելու պահին անշարժ գույքը գրավ դրված չէ, արգելանքի տակ չի գտնվում համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «Երևան» տարածքային ստորաբաժանման կողմից 29.03.2018թ.-ին /քսանինը մարտի երկու հազար տասնութ/ տրված N ՄՏ-29032018-01-0431 գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի:

2.4 Անշարժ գույքի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Մեսրոպ Մաշտոցի պողոտա 47:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Վաճառողը իրավունք ունի՝

3.1.1 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրեն վճարման ենթակա գումարները:

3.2 Վաճառողը պարտավոր է՝

3.2.1 Գնորդին հանձնել Անշարժ գույքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ժամկետում և ծավալներով:

3.2.2 Ապահովել սույն պայմանագրի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը:

3.3 Գնորդն իրավունք ունի՝

3.3.1 Տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իր կողմից ձեռք բերված Անշարժ գույքը ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3.4 Գնորդը պարտավոր է՝

3.4.1 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տույժը:

3.4.2 Իր միջոցների հաշվին վճարել Անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 68085100 (վաթսուներեք միլիոն ութսունհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրի գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդը պարտավորվում է Վաճառողի՝ «Կոնվերսանկ» ՓԲԸ-ում բացված 1930026349320100 հաշվին վճարել Անշարժ գույքի վաճառքի գինը՝ 68085100 (վաթսուներեք միլիոն ութսունհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Վաճառողի կողմից ներկայացված հանձման-ընդունման արձանագրության (Հավելված 1) հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20(քսան)-ից հետո և այդ ամսում նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է



մինչև 30(երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20(քսան)-ը:

5. ԳՈՒՅՔԻ ՀԱՆԴԵՊ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1 Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է Գնորդին սույն պայմանագրից ծագող իրավունքը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով պետական լիազորված մարմնում գրանցելու պահից:

6. ԱՆՇԱՐՇ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

6.1. Վաճառողը պարտավոր է սույն պայմանագրի կնքումից հետո տասնօրյա ժամկետում Անշարժ գույքը հանձնել Գնորդին, Անշարժ գույքի հանձնման-ընդունման ակտի ստորագրման ճանապարհով:

6.2 Անշարժ գույքը ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Անշարժ գույքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով անշարժ գույքի հանձնման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ անշարժ գույքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 1.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե հանձնված Անշարժ գույքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասն) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Անշարժ գույքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում հանձնված անշարժ գույքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա հանձնված անշարժ գույքը համարվում է ընդունված և պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողի կողմից սույն պայմանագրի 2.1 կետում նշված Անշարժ գույքը չհանձնելու դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Անշարժ գույքի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական տոկոսի չափով):

7.2 Վաճառողի կողմից պայմանագրի 6.1 կետով նախատեսված Անշարժ գույքի հանձնման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ Անշարժ գույքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.1 և 7.2 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում նոտարական վավերացման պահից, կնքված է համարվում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

9.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Անշարժ գույքի ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

ՀՀ
ԿՏԱ
ՊՏԱ
ՈՒԿ
ԿԵՆ
ՎԵՅ
ՎԵՅ
ՎԵՅ

10. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1 Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

10.2. Սույն պայմանագրի՝ «Ընդունելությունների տուն» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Մեսրոպ Մաշտոցի պողոտա 47 հասցեում գտնվող 5727.2 /հինգ հազար յոթ հարյուր քսանյոթ ամբողջ երկու տասնորդական/ քառ. մետր մակերեսով շենք-շինությունների և դրանց օգտագործման և սպասարկման համար հատկացված 1.379152 /մեկ ամբողջ երեք հարյուր յոթանասունինը հազար հարյուր հիսուներկու միլիոներորդական/ հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է դրա պետական գրանցման պահից:

10.3 Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված են Կողմերի կողմից, վավերացված են նոտարի կողմից և գրանցված են անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում:

10.4 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 8 /ութ/ էջից, կնքվում է 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ, մեկ օրինակը պահվում է նոտարական գործում, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ գրանցելու համար: Պայմանագրի օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

10.5 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

Գնորդ

ՀՀ ԿԱ պետական գույքի
կառավարման վարչություն
ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011019651
ՀՎՀՀ 02528489

Վաճառող

«Ընդունելությունների տուն» ՓԲԸ
ք. Երևան, Մեսրոպ Մաշտոցի պ. 47
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930026349320100
ՀՎՀՀ 01536788

Աշխատակազմի ղեկավար՝

Վահագն Հարությունյան



Նշխարարյան Նուսրիս

Գլխավոր տնօրեն՝

Թամարա Իկոնյան



RECEIVED
JUL 14 2014



ԵՐԿՈՒ ՀԱՉԱՐ ՏԱՍՆՈՒԹ ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՀԻՆԳԻՆ

սույն պայմանագիրը վավերացված է իմ ԵՐԵՎԱՆ ՆՈՒՏԱՐԱԿԿԱՆ տարածքի ՆՈՒՏԱՐ ԷԼՄԻՐԱ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՍ կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ստուգված են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135 հոդվածի համապատասխան, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է գրանցամատյան թիվ 4004-----ով

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար գումարը: Ինքնուրույն կերպով ՀՀ դրամ` համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենսդրության հոդվածների:

Նոտար Ելիհա Գևորգի Դանիելյան



Հավելված 1
«05» ապրիլի 2018թ. կնքված
ՊԳԿՎ-2018-ՄԱ-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
 «Ընդունելությունների տուն» ՓԲԸ
 ք. Երևան, Մեսրոպ Մաշտոցի պ. 47
 «Կոնվերսանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1930026349320100
 ՀՎՀՀ 01536788

Պատվիրատու
 ՀՀ ԿԱ պետական գույքի
 կառավարման վարչություն
 ք. Երևան, Տիգրան Մեծի 4
 ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
 Հ/Հ 900011019651
 ՀՎՀՀ 02528489

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր
 Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2018թ.
 Պայմանագրի համարը՝ ՊԳԿՎ-2018-ՄԱ-1
 Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
 « » « » 20 թ. դուրս գրված N հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն
 արձանագրությունը հետևյալի մասին.
 Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը հանձնել է հետևյալ Անշարժ գույքը՝

N	Անշարժ գույքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.



Հավելված 1.1
«05» ապրիլի 2018թ. կնքված
ՊԳԿՎ-2018-ՄԱ-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
 պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունը (այսուհետ՝ Գնորդ) և «Ընդունելությունների տուն» ՓԲԸ

(այսուհետ՝ Վաճառող) միջև 2018թ. _____-ին կնքված N ՊԳԿՎ-2018-ՄԱ-1
պայմանագրի կնքման ամսաթիվը
 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2018թ. _____-ին հանձնման-ընդունման
 նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված անշարժ գույքը.

Անշարժ գույքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

 ազգանուն, անուն

 ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

 ազգանուն, անուն

 ստորագրություն



A large, handwritten signature in blue ink, consisting of a single, continuous, flowing line that forms a tall, narrow loop at the top and tapers to a point at the bottom.